

ետքը՝ ծերակուտին ու խորհրդանոցին անդամները Վերսալի ժողովեցան հասարակապետութեան նոր գահերէց ընտրելու համար: — Առաջին քուէարկութիւնն արդիւնք չունեցաւ, վասն զի ընտրելիներէն ոչ ոք ձայնից բացարձակ առաւելութիւն ունեցաւ: Այս քուէարկութեամբ Պրիստն 338, Փոր 244 եւ Վալտէք-Ռուստ 184 ձայն ունեցան: Վալտէք-Ռուստի հրատարակելովն թէ ինք ի նպաստ Փէլքես Փորի ընտրելի ըլլալէ կը հրաժարի այս վերջնոյս ընտրութիւնն ապահովցաւ. ստոյգ ալ երկրորդ քուէարկութեան ժամանակ Փէլքես Փոր 429 ձայնով Գաղղիոյ հասարակապետութեան գահերէց ընտրուեցաւ, անձ մի որ չափատրականներէն ըլլալուն համակրութեամբ որջուներեցաւ: Նորընտիր գահիքոցին առաջինն իոգն եղաւ պաշտօնարան մ'ունենալ, վասն զի Տիւփիսի ընտրութեան իրիկունն իսկ պաշտօնարանին հրաժարականը ներկայացուց: Գահերէցը թէ եւ երկու անգամ՝ Պուրժուայի յանձնեց պաշտօնարան կազմելը, սակայն ստոր շնաքերն արդիւնք չունեցան, որով եւ ստիպուեցաւ ետ քաշուիլ ամսոյս 24ին: Փոր սկսաւ ուրիշ նշանաւոր անձնաւորութեանց հետ քանակելի, քայց թէ այս քանակցութիւններն ո՛ր պիտի յանգին, յայտնի չէ:

Հունգարիոյ պաշտօնարանին կազմութիւնը ամսոյս 15ին կրցաւ կատարուիլ: Կոմս Խուէն-Հէտերվարի նրչափ ալ աշխատեցաւ տէրութեան հաւատարիմ՝ կուսակցութիւններէն բաղկացեալ պաշտօնարան մը կազմելու, սակայն ազատամտականներու այս ծրագրին սաստիկ հակառակելուն պատճառաւ ստիպուեցաւ սոյն ծրագրին գործադրութենէն ետ կենալ: Անոր վրայ քանի մ'ապարդին փորձերէ ետքը՝ Պարոն Պանֆի յանձն առաւ պաշտօնարան կազմելու գործը, զոր եւ ի զուլիս հանեց: Նոր պաշտօնարանին ուղղութիւնն ըստ ամենայնի այն է, ինչ որ էր նախընթացինը: Պանֆիի պաշտօնարանին մէջ վաճառականութեան եւ իշխման նախարարները հայազգի են, որոնք եւ պաշտօնարանին ամէնէն պատկառելի ոյժերն են: Այս երկու պաշտօնէից համառօտ կենսագրութիւնն ընթերցողը Հանդիսի այս թուոյն մէջ կը գտնուի:

Յունաստան՝ ուր տարւոյ մէջ քանի մ'անգամ՝ իրարու կը յաջորդեն թրիքուփիսի եւ Տէլլանիսի պաշտօնարաններն — ինչպէս եւ այս օրերս՝ առաջնոյն վերջնոյս տեղի տալովը — այնպիսի դրամական անձկութեան մէջ կը գտնուի որ առաջնակարգ անձնաւորներն անգամ՝ դժուարաւ ետ մի կրնան գտնել սնանկութեան ստղենն անուր:

Գերմանիա՝ ուր տժգոյութիւնն օրէ օր կ'աւելնայ, նորանոր դժուարութեանց կը բախի՝ ընկերվարականաց դէմ՝ դնել ուզած օրէքներուն պատճառաւ:

Պուլկարիոյ իշխանը կը ստիպուի Ջանքովի հաշտութեան ծեռք կարկառել եւ նոր քաղաքականութեան մի հետեւիլ: — Սերպիոյ թագաւորը Գաղղիա կ'ուղենորի մերը այցելու: — Դուալիա Ափրիկէի արշաւանաց յաջողութեամբ կը հրճուի: Բեղգիա՝ Բոսնիոյի պետութիւնը գնելու առաջադիւթիւնը մտքերը կը զբաղեցնէ: — Միացեալ Նահանգք իրենց մտադրութիւնը՝ գործաւորաց շարժմանը դարձնելու ստիպուած են: — Ճափոնացիք նորանոր յաղթութիւններով կը յառաջանան ի ճննաստան:

ԲՈՒՆԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՒՆԱՆԴԱԿԱՆ

ՀԱՆՈՒՍՄԱՅԱՆ — Մի տապանաբար Ծօնքեանից (Պատկերաւ). 33:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Հատակտորը Ծանքայ եկ. պատմութեան. 36:

ԲԺՇԿԱԿԱՆ — 22. ԺԱ. Արարապատին (գեղադործութիւն). 41:

ԱՇԽԱՏԱՆԳՐԱԿԱՆ — Կապա. Բ. 46:

ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ — Մասիկ եւ Թունիկ. 49: — Միթթարութիւն. 49: — Տիրուցան խորհուրդ. 49:

ՊԱՏՄԱԿԱՆ — Դրանսիականից հայոց մայրաքաղաքը. 50:

ԳՐԱԿԱՆ — Մ. Խորենացի ըստ Պրոֆ. Ն. Մարի. 54: — Եղիշէի պատմութեան աղբիւրը. 59:

ԹԳԹԱԿՈՒԹԻՒՆ — Երկու հայազգի նոր պաշտօնեայ. 61:

ՆԱԽԵՐԵՆԻ

ՄԱՆՐԱՆՈՒՐ — Թլիթ, ներքնագրատ. 62: — Լուրափայտի գիւտը. 62: — Հեռամալին ու քակտեղիս. 62:

ՏՆՏԵՍԱԿԱՆ — Խնձորի օգոտները. 62: — Հիւսաղութիւնք եւ ծխախոտ. 62: — Սննդիկ աղբիկը ռոգաւանի. 63:

ՆՈՐԱՆՈՒՐ — Վայոյի շաքանակեմոյ հայրենիքը. 63:

ՔԱՐԱՔԱԿԱՆ ՏԵՍԱԿՈՒԹԻՒՆ

ՀՐԱՍՏԱՆԿԱՆ Եւ ՊԱՏՄԱՆԱՆՏՈՒ ԽՍՐԱԿՈՒՐ

Վ. ԲԱՍՏԱՆԵԼ Վ. ՊԱՐՈՆԶ

Վ Ի Ե Ն Ն Ա Ն Ս Ի Ի Բ Ո Ւ Բ Ն Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն